2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

Հայտի հաստատման ամսաթիվը՝ *07.03.2024թ.*

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտումն ու քննությունը:

ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեն**՝ որպես քննչական մարմին, պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իր գործունեության արդյունքում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի:

ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողները քրեական վարույթի պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են մի շարք քննչական, օպերատիվ-հետախուզական և դատավարական գործողություններ, այդ թվում՝ նշանակում փորձաքննություններ, դատավարական փաստաթղթեր ներկայացնում թարգմանության և այլն:

ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեում գործում են** քննչական և օպերատիվ-հետախուզական վարչությունները: Քննչական վարչությունների գործունեության միջոցով ապահովվում է հանցավորության, մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարը, որը բխում է ՀՀ կառավարության 2021 - 2026 թվականների ծրագրի 5.5-րդ բաժնից:

ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեի** ծառայողների հանձնարարությամբ կամ խնդրանքով օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության, զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների կատարումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հետևաբար՝ ՀՀ **հակակոռուպցիոն կոմիտեն** առաջնորդվում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի դրույթներով, ինչպես նաև ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով ամրագրված

կարգավորումներով, մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Անդրազգային հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիայով, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի և Քիշնևի կոնվենցիաներով, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով և այլն:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի բյուջետային ծրագիրը կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 5.5-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր, ռազմավարական նպատակ 2-ի 2.2, 2.3, 2.4, 2.6, 2.7, 2.11 կետերի հետ:
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի բյուջետային ծրագիրը կապված է նաև ՄԱԿ-ի «կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 5-րդ (հասնել գենդերային հավասարության եվ զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին) և 16-րդ (Էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով, խթանել օրենքի գերակայությունը ազգային և միջազգային մակարդակներում և ապահովել արդարադատության հավասար հասանելիություն բոլորի համար, մինչև 2030 թ. զգալիորեն կրճատել ֆինանսների և զենքերի ապօրինի հոսքերը, ուժեղացնել գողացված գույքը հետ վերցնելու և վերադարձնելու գործողությունները և պայքարել կազմակերպված հանցավորության բոլոր ձևերի դեմ, ուժեղացնել բոլոր մակարդակների համապատասխան ազգային հաստատությունները, այդ թվում և միջազգային գործակցության միջոցով, զարգացնելու՝ բռնությունները կանխելու և ահաբեկչության ու հանցավորության դեմ պայքարելու կարողությունները մասնավորապես զարգացող երկրներում) նպատակների հետ:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ	Հիմնավորումներ

ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	
Ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի իրականացում, օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացում	***«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենք*** ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հանդիսանում է քննչական մարմին, որը կազմակերպում և իրականացնում է կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթ, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն, որի նպատակը քննվող յուրաքանչյուր վարույթով օբյեկտիվ ճշմարտության բացահայտումն է, արդարադատության իրականացմանը նպաստելը: Յուրաքանչյուր քրեական գործով գործնականում ծախսվում են ֆինանսական միջոցներ՝ պայմանավորված դատավարական և քննչական, ինչպես նաև գաղտնի գործողությունների կատարման անհրաժեշտությամբ:
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացում	***«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 5-րդ գլխի 36-րդ հոդված*** Ծառայողների մասնագիտական պատրաստվածության աստիճանը հանդիսանում է ծրագրի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոն: ՄԺԾԾ-ով՝ երկու տարին մեկ ծառայողների վերապատրաստումը կմնա որպես կարևոր գերակայություն:
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	Հաշվի առնելով Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեունեության կայացման, կադրերի համալրման և դրանով պայմանավորված՝ Կոմիտեին նոր շենք հատկացնելու հագամանքը՝ նախատեսվում է աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավման նպատակով ձեռք բերել անհրաժեշտ գույք և տեխնիկա:
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովում և բարելավում	ՀՀ կառավարության 27.07.2023թ. թիվ 1250-Ա որոշմամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին հատկացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Արղության փ. 2-րդ հասցեում գտնվող շենքերի և շինությունների վերակառուցում:

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1231 «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում»

3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1231	11001	Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննություն	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով օբյեկտիվ, արդյունավետ նախաքննության ապահովում	հաստիքների քանակները, ընթացիկ ծախսերը	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ և 483-րդ հոդվածներ

1231	11002	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի կատարման ապահովում	-	*«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 2-րդ գլխի 8-րդ հոդվածի 4-րդ մաս*
1231	11003	Վերապատրաստման և հատուկ ուսուցման կազմակերպում	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների երկու տարին մեկ պարտադիր վերապատրաստումների իրականացման ապահովում	-	*«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 5-րդ գլխի 36-րդ հոդված*
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1231	31001	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեունեության կայացման, կադրերի համալրման և դրանով պայմանավորված՝ Կոմիտեին նոր շենք հատկացնելու հագամանքով պայմանավորված՝ նախատեսվում է աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավման նպատակով ձեռք բերել անհրաժեշտ գույք և տեխնիկա:		
1231	31003	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովում և բարելավում	ՀՀ կառավարության 27.07.2023թ. թիվ 1250-Ա որոշմամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին հատկացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Արղության փ. 2-րդ հասցեում գտնվող շենքերի և շինությունների վերակառուցում**:**		

3.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից 2025-2027թթ ընթացքում իրականացվելու է «1231. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում» ծրագիրը, որի ծախսային պարտավորությունները 2025 թվականի համար կազմում են ***4821213.7*** հազ. դրամ, 2026 թվականին՝ ***3700289.9*** *հազ. դրամ*, 2027 թվականին՝ ***3677377.5*** *հազ. դրամ*:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով նախաքննության իրականացումը, ինչպես նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը, քննված քրեական վարույթներով հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքների բացահայտումը ու դրանք վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար համապատասխան մարմիններին միջնորդագրեր ներկայացնելը, հանցագործությունների քննության

մեթոդիկայի ուսումնասիրությունը, քննության դրական փորձի ներդրումը քննչական պրակտիկայում, Կոմիտեում ստացված դիմումների և բողոքների քննարկումն ու լուծումը, որի վերջնական նպատակն է քննության որակի, ամբողջականության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության ապահովումը, մարդու և քաղաքացու իրավունքների, հիմնական ազատությունների ապահովումը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթներում քննվող քրեական վարույթներով նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումների բացառումը, պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասի վերականգնման ապահովումը, քննվող քրեական գործերով կոռուպցիոն բնույթի քողարկված հանցագործությունների բացահայտումը, կոռուպցիոն երևույթների վերաբերյալ հասարակության մոտ համապատասխան իրավագիտակցության ձևավորումը:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

«11001. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննություն.

նկարագրությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով օբյեկտիվ, արդյունավետ նախաքննության ապահովում, որի համար պետական բյուջեից նախատեսվում է ֆինանսավորում՝ 2025 թվականին **3513430.9** հազ. դրամ, 2026 թվականին՝ **3548823.0** հազ. դրամ, 2027 թվականին՝ **3585068.0** հազ. դրամ.

«11002. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ.

նկարագրությունը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի կատարման ապահովում, որի համար պետական բյուջեից նախատեսվում է ֆինանսավորում՝ 2025 թվականին՝ **59994.2** հազ. դրամ, 2026 թվականին՝ **60447.3** հազ. դրամ, 2027 թվականին՝ **60896.8** հազ. դրամ:

«11003. Վերապատրաստման և հատուկ ուսուցման կազմակերպում.

նկարագրությունը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վերապատրաստումների իրականացում, որի համար պետական բյուջեից

նախատեսվում է ֆինանսավորում՝ 2025 թվականին՝ **10515.6** հազ. դրամ, 2026 թվականին՝ **21019.7** հազ. դրամ, 2027 թվականին՝ **6412.8** հազ. դրամ.

«31001. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում.
նկարագրությունը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունն ապահովելու համար վարչական սարքավորումների ձեռքբերում, որի համար պետական բյուջեից նախատեսվում է ֆինանսավորում՝ 2025 թվականին՝ **35000.0** հազ. դրամ, 2026 թվականին՝ **70000.0** հազ. դրամ, 2027 թվականին՝ **25000.0** հազ. դրամ:

«31003. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովում և բարելավում.
նկարագրությունը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի շենք-շինությունների վերակառուցում, կապիտալ վերանորոգում և նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում, որի համար պետական բյուջեից նախատեսվում է ֆինանսավորում՝ 2025 թվականին՝ **1202273.0** հազ. դրամ, 2026 թվականին՝ **0.0** հազ. դրամ, 2027 թվականին՝ **0.0** հազ. դրամ:

3.3. Նոր նախաձեռնությունները

Չկան:

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չունի:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության իրականացման հետ կապված ծախսերը վերաբերվում է Հայաստանի Հանրապետությանը:

6. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրեր կամ միջոցառումներ չունի:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր կամ միջոցառումներ չունի:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պատասխանատվությամբ 2025-2027թթ իրականացվող ծրագրի համար 2025 թվականին պետական բյուջեից նախատեսում է 4821213.7 հազ. դրամ, 2026 թվականին՝ 3700289.9 հազ. դրամ և 2027 թվականին 3677377.5 հազ. դրամ:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հայտի հետ կապված ռիսկեր չունի: